

Պրոպատիկէի մէջ, անուանակոչուեցաւ Ս. Աննա: Դ. դարէն Ը. դար նշանաւոր Հայրերու քերթուածներն ու քարոզները կը հասկցնեն թէ Ս. Կոյսը ծնած է Պրոպատիկէի մէջ, և հո՛ն է անոր մօր՝ Աննայի տաճարը, որ կոչուած է նաև Անդամալոյժին եկեղեցին:

Եթէ ստոյգ է որ Ս. Աննայի նշխարները Կ. Պոլսոյ մէջ կը յարգուէին, եւ նոյն իսկ Ս. Հեղինէին ձեռքով բերուեցան, բանաւոր կ'ըլլայ Դ. դարուն շինուած երկրորդական եկեղեցիներու շարքին դասակարգել այն եկեղեցին՝ ուր Կոստանդիանոսի բարեպաշտ մայրը կրնար միևնոյն ժամանակ պատուել Տիրամօր ծննդեան տեղը և Անոր ծնողաց՝ Յովակիմայ եւ Աննայի գերեզմանը: (Այս եկեղեցիին ընդարձակ պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել մեր Հայկական վանկեր եւ եկեղեցիներ գործը, էջ 66-75):

Այս եկեղեցիին շինուածքին մէջ կը տեսնուին խորհրդանշաններ որ ցոյց կուտան Ս. Յովակիմ-Աննայի տան աւանդութիւնները. այս մասին վերոգրեալ գործին մէջ կը յիշենք հետեւեալ հատուածը. «ձեռնհաս ճարտարապետներ և հնախօսներ գիտակ են թէ հին եկեղեցիներուն մէջ դուռներու, պատուհաններու, վիմաշարքերու թիւը համաչափ միութեամբ պարզած տարածութիւններն իսկ ունին իրենց խորհրդաւոր նշանակութիւնները: Աւելի զօրաւոր պատճառով, իսկական պարզ քանդակագործութիւն մը մասնաւոր գաղափարի մը բացատրութիւնը չի՞ կրնար ըլլալ:

Նոյն եկեղեցիին մէջ կայ նաև ուրիշ խորհրդապատկեր մը գագաթին վրայ այն մոյթերուն որոնք կը շրջանակին զմբէթը բռնող կողակը: Հոն որոշ կ'երևի մարդու մը եւ եզան մը քանդակը. անվարժ ձեռքի մը քանդակներ են ասոնք, բայց Ս. Գրոց մեկնու-